Հաշվետվություն

2026 թվականի հոկտեմբերի 6-8-ը Մեծ Բրիտանիայի և Հյուսիսային Իռլանդիայի Միացյալ Թագավորություն (Սաութհեմփթոն) կատարած գործուղման արդյունքների մասին

1. **Անունը, ազգանունը, զբաղեցրած պաշտոնը**

   Սուրեն Թովմասյան՝ Կադաստրի կոմիտեի ղեկավար:

2. **Գործուղման վայրը և ժամկետները.**

   Մեծ Բրիտանիայի և Հյուսիսային Իռլանդիայի Միացյալ Թագավորություն (Սաութհեմփթոն), 2026 թվականի հոկտեմբերի 6-8-ը:

3. **Հրավիրող կողմը.**

   «Եվրոգեոգրաֆիքս» ասոցիացիա:

4. **Գործուղման նպատակը (աշխատանքային ո՞ր խնդրի լուծման համար էր նախատեսված գործուղումը).**

   Մասնակցություն «Եվրոգեոգրաֆիքս» ասոցիացիայի կառավարման խորհրդի նիստին:

5. **Քննարկված թեմաները.**

   Միջոցառման շրջանակներում քննարկվել են «Եվրոգեոգրաֆիքս» ասոցիացիայի կառավարման, ռազմավարական զարգացման և ընթացիկ գործունեությանն առնչվող հետևյալ հիմնական թեմաները.

   - ասոցիացիայի ընթացիկ կառավարման և գործառնական գործունեության հիմնական ուղղությունները, այդ թվում՝ ֆինանսական հաշվետվողականության, ֆինանսական դրության և ընթացիկ գործունեության վերաբերյալ հարցերը,
   - ասոցիացիայի գործունեությանն առնչվող ռազմավարական ռիսկերը, ռիսկերի կառավարման գործընթացները և ռիսկերի ռեգիստրի շրջանակներում իրականացվող աշխատանքները,
   - ասոցիացիայի գործունեության հիմնական կատարողական ցուցանիշները (KPIs), դրանց գնահատման արդյունքները և ընթացիկ գործունեության արդյունավետության ապահովմանն ուղղված հարցերը,
   - ասոցիացիայի ռազմավարական տեսլականը, զարգացման և հետագա գործունեության հիմնական ուղղությունները՝ հաշվի առնելով հնարավոր բարենպաստ և ոչ բարենպաստ իրավիճակները, ինչպես նաև վերջիններիս ռիսկերի գնահատումն ու կառավարման հնարավոր մոտեցումները,
   - ասոցիացիայի անդամ կազմակերպությունների միջև համագործակցության, մասնագիտական փորձի և գիտելիքների փոխանակման, ինչպես նաև համագործակցության հետագա խորացման հնարավորությունները,

- «Ordnance Survey»-ի ղեկավարների և տեխնիկական փորձագետների հետ մասնագիտական և տեխնիկական փորձի փոխանակման հնարավորությունները, այդ թվում՝ ոլորտային առաջատար մոտեցումների և կիրառվող լուծումների վերաբերյալ տեղեկատվության փոխանակումը,
- ասոցիացիայի շրջանակներում հետագա համագործակցության և համատեղ նախաձեռնությունների իրականացման հնարավորությունները:

6. **Հանդիպումներ, ելույթներ, բարձրացված կամ քննարկված հարցեր.**

Կառավարման խորհրդի նիստի և «Ordnance Survey»-ի շրջանակներում տեղի ունեցած աշխատանքային հանդիպումների ընթացքում Սուրեն Թովմասյանը, որպես «Եվրոգեոգրաֆիքս» ասոցիացիայի Կառավարման խորհրդի անդամ, ներկայացրել է Հայաստանի Հանրապետության և Կադաստրի կոմիտեի տեսակետները՝ ընդգծելով ժամանակակից գեոդեզիայի, քարտեզագրության և տարածական տվյալների կառավարման ռազմավարական նշանակությունը:

Քննարկումների ընթացքում անդրադարձ է կատարվել «Եվրոգեոգրաֆիքս» ասոցիացիայի ռազմավարական զարգացման հեռանկարներին, եվրոպական մակարդակում տարածական տվյալների դերի ընդլայնմանը և ընդհանուր նպատակների առավել արդյունավետ իրականացման հնարավոր ուղիներին:

Համապարփակ ներկայացվել է նաև ասոցիացիայի կառավարման մոդելը, դրա կազմակերպական կառուցվածքը և կառավարման գործընթացներում ներգրավված պատասխանատու անձանց դերերն ու գործառույթները՝ կարևորելով կառավարման արդյունավետության և պարտականությունների հստակ բաշխման նշանակությանը:

«Ordnance Survey»-ի ներկայացուցիչների հետ հանդիպումների և կազմակերպության գործունեությանը ծանոթանալու շրջանակներում ուշադրություն է դարձվել կազմակերպության երկարամյա մասնագիտական փորձին, աշխատանքի կազմակերպման մշակույթին և ռազմավարական մոտեցումներին:

Հանդիպման ընթացքում քննարկվել են պետական և մասնավոր հատվածների միջև համագործակցության, պետական մարմինների կողմից տրամադրվող տվյալների հետագա օգտագործման և վերավաճառքի պայմանների հետ կապված մանրամասներ, ինչպես նաև ներկայացվել է «Ordnance Survey» կազմակերպության մոտեցումը, որի համաձայն՝ տրամադրված երկրատարածական տվյալների առևտրային օգտագործման կամ վերավաճառքի դիմաց, համապատասխան պայմանագրային պայմաններով, կարող է նախատեսվել ռոյալթիի վճարում:

Միաժամանակ, հաշվի առնելով 2027 թվականին Հայաստանի Հանրապետությունում՝ Կադաստրի կոմիտեի հյուրընկալությամբ, «Եվրոգեոգրաֆիքս» ասոցիացիայի Գլխավոր ասամբլեայի անցկացումը, անդրադարձ է կատարվել դրա նախապատրաստման և կազմակերպման շրջանակներում իրականացվելիք աշխատանքներին:

Ամփոփելով հանդիպումների ընթացքում քննարկված հարցերը՝ հարկ է նշել, որ մասնակցությունը նպաստել է մասնագիտական փորձի փոխանակմանը, ոլորտի զարգացմանն ուղղված կիրառական և ռազմավարական մոտեցումների

ուսումնասիրմանը, ինչպես նաև հետագա համագործակցության ընդլայնման հնարավորությունների բացահայտմանը:

7. **Հանդիպման կամ հավաքի ժամանակ ընդունված որոշումները, պայմանավորվածությունները, ստորագրված փաստաթղթերը.**

Կառավարման խորհրդի նիստի ավարտին ամփոփվել են քննարկումների արդյունքները և հետագա գործողությունները՝ «Եվրոգեոգրաֆիքս» ասոցիացիայի ռազմավարական զարգացման և ընթացիկ գործունեության շրջանակներում:

Անդրադարձ է կատարվել 2027 թվականի ընթացքում կիրառական ուսումնասիրությունների (Case Studies) նախապատրաստման և հրապարակման նախաձեռնությանը, որը միտված է անդամ կազմակերպությունների փորձի ներկայացմանը, տեղեկատվության փոխանակման խթանմանը և «Եվրոգեոգրաֆիքս» ասոցիացիայի ներքին ու արտաքին գործընկերների հետ հաղորդակցության զարգացմանը: Քննարկվել է նաև DEFIS-ի մրցույթի իրականացման նպատակով պատասխանատու կազմակերպությունների միավորմանն աջակցություն ցուցաբերելու հարցը՝ ազգային քարտեզագրական և կադաստրային մարմինների (NMCAs) հետ արդյունավետ համագործակցության և նրանց ներգրավվածության ապահովման նպատակով:

2027 թվականին Հայաստանի Հանրապետությունում՝ Կադաստրի կոմիտեի հյուրընկալությամբ, «Եվրոգեոգրաֆիքս» ասոցիացիայի Գլխավոր ասամբլեայի անցկացման կապակցությամբ նախատեսվել է շարունակել միջոցառման նախապատրաստական և կազմակերպչական աշխատանքները:

8. **Առաջարկությունները, դրանց ընթացք տալու վերաբերյալ առաջարկները՝ եղանակը, ձևը, ժամկետները, պատասխանատուները, ակնկալվող արդյունքները.**

Գործուղման շրջանակներում ձեռք բերված մասնագիտական փորձը և «Ordnance Survey»-ի գործունեության ուսումնասիրության արդյունքում ստացված գիտելիքները նպատակահարմար է հաշվի առնել Կադաստրի կոմիտեի կողմից գեոդեզիայի, քարտեզագրության և տարածական տվյալների կառավարման ոլորտներում իրականացվող աշխատանքների և երկարաժամկետ զարգացման ուղղությունների ձևավորման ընթացքում:

Մասնավորապես, առաջարկվում է շարունակել «Եվրոգեոգրաֆիքս» ասոցիացիայի շրջանակներում Հայաստանի Հանրապետության ակտիվ ներգրավվածությունը՝ Կառավարման խորհրդում ներկայացվածության միջոցով մասնակցելով ռազմավարական քննարկումներին, փորձի փոխանակմանը և ոլորտային համագործակցության զարգացմանը:

2027 թվականին Հայաստանի Հանրապետությունում՝ Կադաստրի կոմիտեի հյուրընկալությամբ, նախատեսվող «Եվրոգեոգրաֆիքս» ասոցիացիայի Գլխավոր ասամբլեայի նախապատրաստման շրջանակներում նախատեսվում է շարունակել

կազմակերպչական և համակարգման աշխատանքները՝ ասոցիացիայի համապատասխան կողմերի հետ համագործակցությամբ:

Ակնկալվում է, որ նշված աշխատանքները կնպաստեն Կադաստրի կոմիտեի միջազգային համագործակցության ամրապնդմանը, առաջատար մասնագիտական փորձի արդյունավետ կիրառմանը և գեոդեզիայի, քարտեզագրության ու տարածական տվյալների կառավարման ոլորտների հետագա զարգացմանը:

9.Ստորագրությունը, ամսաթիվը:

Սուրեն Թովմասյան 09.10.2026 թ.

Հավելված N 2 ՀՀ վարչապետի N 326-Ն որոշման

Հավելված N 3 ՀՀ վարչապետի N 1230-Ն որոշման

Հաշվետվություն

Գործուղման ծախսերի վերջնահաշվարկի մասին

1 Մարմնի անվանումը Կադաստրի կոմիտե

2 Գործուղման մասին իրավական ակտի համարը ՀՀ Վարչապետի Որոշում 02.10.2026թ. N966-Ա

3 Անուն, Ազգանուն, զբաղեցրած պաշտոն Սուրեն Թովմասյան Կադաստրի կոմիտեի ղեկավար
Գործուղման վայրը Մեծ Բրիտանիայի և Հյուսիսային Իռլանդիայի Միացյալ Թագավորություն՝ քաղաք

4 Սաութհեմփթոն

5 Գործուղման ժամկետները 06.10.2026-08.10.2026թթ.

6 Գործուղման ծախսերի ֆինանսավորման աղբյուրը՝

1) հրավիրող կողմի միջոցների հաշվին հատուցվող ծախսերը
2) պետական բյուջեի միջոցների հաշվին հատուցվող ծախսերը(Կադաստրի կոմիտեի 2026 թվականի ծախսերի նախահաշիվ)
(ՀՀ կառավարության 2005 թվականի դեկտեմբերի 29-ի N 2335-Ն որոշմանը համապատասխան)

1. ճանապարհածախս, 2. գիշերավարձ, 3. օրապահիկ

ա. փաստացի կատարված ծախսերը հիմնավորող փաստաթղթերի հիման վրա՝ դրանցով սահմանված չափով, բայց ոչ ավելի, քան ցանկով նախատեսված չափերը

բ. գործուղման անհատական իրավական ակտով տվյալ գործուղման փաստացի կատարված ծախսերի հատուցման պահանջի համաձայն

Ծախսի տեսակը		Անուն, ազգանուն	Ընդամենը (հազ. դրամ)
		Սուրեն Թովմասյան	
	Ավիաճառայության տեսակը էկոնոմ դաս Ավիաճառայության արժեք (դրամ)	417,000	417.0
Գիշերավարձ	Վճարը 1 օրվա համար (արտարժույթով) $	159	
	Վճարը 1 օրվա համար (դրամ)	57,645.45	
	Օրերի քանակ	2	
	Ընդամենը (դրամ)	115,290.90	115.3
Օրապահիկ	Վճարը 1 օրվա համար (արտարժույթով) $	110	
	Վճարը 1 օրվա համար (դրամ)	39,880.50	
	Օրերի քանակ	3	
	Ընդամենը (դրամ)	119,641.50	119.6
Ընդամենը ծախսեր (դրամ)			651.9

Գլխավոր քարտուղար Միեր Խաչատրյան

Ֆինանսատնտեսագիտական վարչության պետ/
գլխավոր հաշվապահ Գևորգ Սարդարյան
09.10.2026թ.